ՈՒԽՏԱՎՈՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՂՈԹԱԳԻՐՔ

Տաթևի վանք ուխտագնացության մասնակիցների համար

Ուխտավորին

Սույն ուղեցույցը պատրաստվել է Տաթևի վանք ուխտագնացության մասնակիցների համար՝ որպես հոգևոր ուղեկից ճանապարհի, աղոթքի և ուխտի պահերին:

Այն քաղվածք է բարեշնորհ սարկավագ Նարեկ Պետրոսյանի կազմած «Ուխտավորի ուղեցույց» աղոթագրքից, որը նա պատրաստել էր 2020 թ. Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմից առաջ:

Նարեկ սարկավագը իր ծառայությամբ, հավատքով և նվիրումով ապրեց որպես Հայ Առաքելական Եկեղեցու խոնարհ սպասավոր և իր ժողովրդի հավատարիմ զավակ: Նրա կազմած այս աղոթագիրքը ծնվել է ուխտավորին հոգևոր ճանապարհի մեջ զորացնելու, աղոթքով առաջնորդելու և սրբավայրի առջև կանգնելիս սրտի խոսքը Աստծուն ուղղելու նպատակով:

Ցավոք, նահատակվելով 2020 թ. պատերազմում, Նարեկ սարկավագը չտեսավ գրքի հրատարակությունը: Սակայն այսօր նրա թողած հոգևոր ժառանգությունը շարունակում է ուղեկցել ուխտավորներին: Այս գրքում ամփոփված աղոթքներով, շարականներով և հոգևոր երգերով ուխտավորները փառաբանում են մեր Տեր Հիսուս Քրիստոսին, իսկ Նարեկ սարկավագը, հավատում ենք, իր բարեխոսական աղոթքներով միանում է նրանց՝ երկնքից:

Թող այս աղոթագիրքը դառնա յուրաքանչյուր ուխտավորի համար հոգևոր ուղեկից՝ դեպի Տաթև տանող ճանապարհին, աղոթքի, խոնարհության, ապաշխարության և նորոգության պահերին:

Հավե՛րժ լույս և խոնարհում նահատակ Նարեկ սարկավագի հիշատակին:

✦ ✦ ✦

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՂՈԹՔ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ ԱՌԱՋ

2. ԱՂՈԹՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՄԱՐ

3. ԱՂՈԹՔ ԵԿԵՂԵՑԻ ՄՏՆԵԼԻՍ

4. ԱՂՈԹՔ ԳՈՐԾ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ

5. ԱՂՈԹՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ — *քաղվածք*

6. ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԱՊԱՎԻՆՈՒԹՅԱՆ

7. ՀԱՎԱՏԱՄՔ

8. ՍԱՂՄՈՍ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ՝ ՈՂՈՐՄՅԱ — *ՍԱՂՄՈՍ Ծ*

9. Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ «ՀԱՎԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՄ»

10. ՏԵՐ ՈՂՈՐՄԻՐ

• ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳ — *ԷՋՄԻԱԾԻՆ, Ներսես Վանական*

ԱՂՈԹՔ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ ԱՌԱՋ

Տեր, ուղղիր մեր ընթացքը խաղաղության ճանապարհներով.
Տեր, ուղղիր և առաջնորդիր մեր հոգիները և բոլոր հավատացյալներին
գնալ արդարության ճանապարհով դեպի հավիտենական կյանք:
Ամեն:

Կյանքի առաջնորդ և խաղաղության պարգևիչ, Քրիստոս Աստված մեր, առաջնորդիր մեզ գնալ արդար ճանապարհներով և քո ողորմության շնորհիվ խաղաղությամբ ժամանել կյանքի և փրկության նավահանգիստը: Որովհետև Դու ես մեր օգնականն ու փրկիչը, և քեզ են վայելում փառքը, իշխանությունն ու պատիվը. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

✦ ✦ ✦

ԱՂՈԹՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՄԱՐ

Տեր, ուղղիր մեր ընթացքը խաղաղության ճանապարհներով.
Տեր, ուղղիր և առաջնորդիր մեր հոգիները և բոլոր հավատացյալներին
գնալ արդարության ճանապարհով դեպի հավիտենական կյանք:
Ամեն:

Կյանքի առաջնորդ և խաղաղության պարգևիչ, Քրիստոս Աստված մեր, առաջնորդիր մեզ գնալ արդար ճանապարհներով և քո ողորմության շնորհիվ խաղաղությամբ ժամանել կյանքի և փրկության նավահանգիստը: Որովհետև Դու ես մեր օգնականն ու փրկիչը, և քեզ են վայելում փառքը, իշխանությունն ու պատիվը. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

✦ ✦ ✦

ԱՂՈԹՔ ԵԿԵՂԵՑԻ ՄՏՆԵԼԻՍ

Այս սուրբ Եկեղեցու դռան մոտ և աստվածընկալ ու լուսապայծառ սրբությունների առաջ երկյուղածությամբ խոնարհվում և երկրպագում ենք քեզ, Տեր Աստված, որ երկնքում ես և ամենուր: Քո սուրբ, հրաշալի և հաղթող Տերությունդ օրհնում ենք ու փառավորում և քեզ՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն օրհնություն ու փառք ենք մատուցում, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

✦ ✦ ✦

ԱՂՈԹՔ ԳՈՐԾ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Մեր ձեռքի գործերը ուղղորդիր, ո՛վ Տեր,
եւ մեր ձեռքի գործերը հաջողիր. Ամեն:

✦ ✦ ✦

ԱՂՈԹՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

/ քաղվածք /

Աստվածածի՛ն, Քրիստոսի Մայր և Հոր Միածնի ծնող, անեծքները վերացնող և մարդկային ցեղի պարծանք, Հորը արարածներիս հետ հաշտեցնող, կույսերի թագ ու պսակ և համարձակ բարեխոս մեղավորների համար:

Ամեն ինչով մեղավորս ընկնում եմ քո առջև և աղաչում. իբրև նույն Ինքը՝ քեզնից մարմնացածը, բարեխոսի՛ր ինձ համար Բան Աստծու առջև, Որին ծնեցիր մարմնով, Որին կերակրեցիր՝ բոլորի և բոլոր ապրողների Կերակրիչին:

Աղաչում եմ քեզ, Լույսի՛ Մայր, ինձ համար մեղքերի թողություն խնդրի՛ր: Նրա առջև դիր աղերս ու աղաչանք՝ հիշեցնելով Նրա կրած չարչարանքները, որ ինձ համար կրեց Բարերարն ու Մարդասերը:

Սո՛ւրբ Կույս, հիշեցրո՛ւ այդ չարչարանքները, որպեսզի ողորմի և ների բազմամեղիս, ջնջի իմ հանցանքի գիրը և Իր անմեղ մատով ու սուրբ արյունով դրոշմի դեգերածիս անունը անվախճան կյանքի մատյանում՝ Իր բոլոր սրբերի մոտ, որպեսզի նրանց հետ փառավորեմ Ամենասուրբ Երրորդությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից:

Ամեն:

Հովհաննես Վարդապետ Գառնեցի

✦ ✦ ✦

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԱՊԱՎԻՆՈՒԹՅԱՆ

Թող Քո Խաչը մեզ ապավեն լինի Տեր Հիսուս, երբ որ երևաս Հոր փառքով՝ լուսավոր ամպերի մեջ, այն ժամանակ մենք չենք ամաչի, Քե՛զ հուսացողներս,

այլ Քո մեծ զորությամբ կուրախանանք Քո Աջ կողմում, իբրև լուսո որդիներ, իբրև ցերեկվա որդիներ: Ամեն:

ՀԱՎԱՏԱՄՔ

Հավատում ենք Մեկ Աստծո, Ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելիների և աներևույթների Արարչին:

Եվ մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին, Աստծո Որդուն, ծնված Հայր Աստծուց, միածին, այսինքն՝ Հոր էությունից: Աստված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ՝ արարած: Նույն Ինքը՝ Հոր բնությունից, Որի միջոցով ամեն ինչ եղավ երկնքում և երկրի վրա՝ երևելիները և աներևույթները:

Որ հանուն մեզ՝ մարդկանց և մեր փրկության համար՝ իջավ երկնքից, մարմնացավ, մարդացավ, Սուրբ Հոգով կատարելապես ծնվեց Սուրբ Կույս Մարիամից: Որով ճշմարտապես և ոչ կարծեցյալ կերպով՝ առավ մարմին, հոգի և միտք և ամեն ինչ, որ կա մարդու մեջ: Չարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով ելավ երկինք, նստեց Հոր աջ կողմում:

Գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու ողջերին և մահացածներին: Նրա թագավորությունը չունի վախճան:

Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն՝ անեղին և կատարյալին, որ խոսեց օրենքի և մարգարեների և Ավետարանների միջոցով: Որն իջավ Հորդանանի վրա, քարոզեց առաքյալների միջոցով և բնակություն հաստատեց սրբերի մեջ:

Հավատում ենք նաև մեկ, Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցու, մեկ մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության և թողության: Մեռելների հարության, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանի, երկնքի արքայության և հավիտենական կյանքի:

Իսկ նրանք, ովքեր ասում են, թե կար ժամանակ, երբ չկար Որդին, կամ կար ժամանակ, երբ չկար Սուրբ Հոգին, կամ ասում են, թե ոչնչից գոյացան կամ այլ էությունից են Աստծո Որդին կամ Սուրբ Հոգին, և թե նրանք ենթակա են փոփոխման կամ այլայլման, այնպիսիներին նզովում է Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Իսկ մենք փառավորենք Նրան, Ով հավիտյաններից առաջ է՝ երկրպագելով Սուրբ Երրորդությանն ու մեկ Աստվածությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

ՍԱՂՄՈՍ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ՝ ՈՂՈՐՄՅԱ

ՍԱՂՄՈՍ Ծ

Ողորմիր ինձ, Աստվա՛ծ, քո մեծ ողորմությամբ և քո գթառատությամբ ջնջիր իմ հանցանքները: Առավել ևս լվա՛ ինձ իմ անօրենությունից և իմ մեղքերից մաքրիր ինձ: Իմ անօրենություններն ես ինքս գիտեմ, և մեղքերն իմ միշտ առջևս են: Քո դեմ միայն մեղանչեցի, Տե՛ր, և չարիք գործեցի քո առջև, որպեսզի արդար լինես քո խոսքերում, և հաղթող՝ քո դատաստանի մեջ: Անօրենությամբ հղիացավ և մեղքերի մեջ ծնեց ինձ մայրն իմ: Դու, Տե՛ր, ճշմարտությունը սիրեցիր և քո իմաստության անհայտն ու ծածուկն՝ ինձ հայտնեցիր: Ցողիր ինձ սպունգով՝ և ես կմաքրվեմ, լվա՛ ու ձյունից ճերմակ կլինեմ: Ինձ ցնծություն և ուրախություն լսել տո՛ւր, և թող տառապյալ ոսկորներս ցնծան: Երեսդ շո՛ւռ տուր իմ մեղքերից և իմ բոլոր հանցանքները ջնջիր ինձնից: Իմ մեջ մաքուր սիրտ հաստատիր, Աստվա՛ծ, և արդար հոգի նորոգիր իմ որովայնում: Մի՛ զցիր ինձ, Տե՛ր, քո երեսից և սուրբ Հոգիդ մի՛ հանիր ինձնից: Ինձ փրկության ցնծությո՛ւն տուր, և քո տիրական Հոգով հաստատիր ինձ: Անօրեններին կսովորեցնեմ քո ճանապարհը, և ամբարիշտները քո կողմը կդառնան: Փրկի՛ր ինձ արյունից, Աստվա՛ծ, իմ փրկությա՛ն Աստված. լեզուս թող ցնծա քո արդարությամբ: Տե՛ր, եթե շրթներս բացես, բերանն իմ կերգի օրհնությունը քո: Եթե ուզեիր՝ պատարագ կմատուցեինք, բայց դու ողջակեզներ չես սիրում: Խոնարհ հոգին է պատարագն Աստծու, մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստված չի արհամարհում: Քո բարեհաճությամբ բարի՛ք գործիր Սիոնին, Տե՛ր, և Երուսաղեմի պարիսպները թող կառուցվեն: Այնժամ դու կհավանես արդարության պատարագները, և, իբրև ուխտի զոհեր, քո սեղանին հորթեր կմատուցեն: Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ «ՀԱՎԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՄ»

Հավատով խոստովանում և երկրպագում եմ Քեզ՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի, անստեղծ և անմահ բնություն, հրեշտակների, մարդկանց և բոլոր եղածների Արարիչ, ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Բ (2)
Հավատով խոստովանում և երկրրպագում եմ Քեզ, անբաժանելի լույս, միասնական Սուրբ Երրորդություն և Մի Աստվածություն, արարիչ լույսի և հալածիչ խավարի, հալածիր իմ հոգուց մեղքերի և անգիտության խավարը և լուսավորիր միտքս՝ աղոթելու Քեզ այժմ հաճույքով ու ստանալու Քեզանից իմ խնդրածները. և ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Գ (3)
Հայր երկնավոր, Աստված ճշմարիտ, որ առաքեցիր Քո սիրելի Որդուն մոլորված ոչխարիս փնտրելու համար, մեղա՛ երկնքի ու Քո առաջ, ընդունիր ինձ ինչպես անառակ որդուն և հագցրու ինձ առաջին պատմուճանը, որից մերկացա մեղքով. և ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Դ (4)
Որդի Աստծո, Աստվա՛ծ ճշմարիտ, որ իջար հայրական ծոցից և մարմին առար սուրբ Կույս Մարիամից մեր փրկության համար, խաչվեցիր, թաղվեցիր և հարություն առար մեռելներից ու փառքով համբարձվեցիր առ Հայրը, մեղա՛ երկնքի և Քո առաջ, հիշիր ինձ, ինչպես ավազակին, երբ գաս Քո արքայությամբ. և ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Ե (5)
Հոգի Աստծո, Աստվա՛ծ ճշմարիտ, որ իջար Հորդանան և Վերնատուն և լուսավորեցիր ինձ սուրբ Ավազանի մկրտությամբ, մեղա՛ երկնքի և Քո առաջ, մաքրիր ինձ վերստին Քո աստվածային հրով, ինչպես հրեղեն լեզուներով՝ սուրբ առաքյալներին. և ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Զ (6)
Անեղ բնություն, մեղա՛ Քեզ իմ մտքով, հոգով և մարմնով, հանուն Քո սուրբ անվան մի՛ հիշիր իմ նախկին մեղքերը. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Է (7)
Ամեն ինչ տեսնող Աստված, մեղանչեցի Քո առջև խորհրդով, խոսքով և գործով, ջնջի՛ր իմ հանցանքների ձեռագիրը և գրի՛ր անունս Կյանքի Գրքում. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Ը (8)
Գաղտնիքնե՛ր քննող, մեղա՛ Քեզ կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, թողությո՛ւն շնորհի՛ր մեղավորիս, քանզի սուրբ Ավազանի ծնունդից մինչև այսօր մեղանչել եմ Աստվածությանդ առաջ իմ զգայարաններով և մարմնիս բոլոր անդամներով. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Թ (9)
Ամենախնամ Տեր, Քո սուրբ երկյուղը պահապան դի՛ր աչքերիս՝ այլևս անպատկառ չնայելու, ականջներիս՝ չախորժելու լսել չար խոսքեր, բերանիս՝ սուտ չխոսելու,սրտիս՝ չարը չխորհելու, ձեռքերիս՝ անիրավություն չգործելու, և ոտքերիս՝ անօրենության ճանապարհով չգնալու, այլ ուղղի՛ր սրանց ընթացքը՝ միշտ լինելու ըստ Քո պատվիրանների. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Ժ (10)
Հուր կենդանի Քրիստո՛ս, Քո սիրո հուրը, որ գցեցի՛ր երկրի վրա, բորբոքի՛ր իմ անձում, որպեսզի այրի իմ հոգու ախտերը և սրբի իմ մտքի խիղճը, մաքրի իմ մարմնի մեղքերը և վառի Քո գիտության լույսն իմ սրտում. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԺԱ (11)
Հոր իմաստություն Հիսո՛ւս, տո՛ւր ինձ իմաստություն՝ ամեն ժամ Քո առջև բարին խորհելու, խոսելու և գործելու: Փրկի՛ր ինձ չար խորհուրդներից, խոսքերից և գործերից. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԺԲ (12)
Բարիք կամեցող Տե՛ր կամարար, մի՛ թող ինձ իմ անձի կամքով գնալ, այլ առաջնորդի՛ր ինձ միշտ լինել ըստ Քո բարեսեր կամքի. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԺԳ (13)
Արքա՛ երկնավոր, տո՛ւր ինձ Քո արքայությունը, որ խոստացար Քո սիրելիներին, զորացրո՛ւ իմ սիրտը՝ ատելու մեղքը և միայն Քեզ սիրելու և Քո կամքը կատար

ԺԴ (14)
Խնամո՛ղ արարածների, պահի՛ր Քո Խաչի նշանով իմ հոգին և մարմինը մեղքերի պատրանքներից, դևերի փորձություններից, անիրավ մարդկանցից և հոգու ու մարմնի բոլոր վտանգներից. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս: անքի Գրքում. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԺԵ (15)
Պահապա՛ն բոլորի Քրիստո՛ս, Քո աջը թող հովանի լինի ինձ վրա գիշեր թե ցերեկ, թե՛ տանը նստելիս, թե՛ ճանապարհ գնալիս, ննջելիս և թե՛ արթնանալիս, որպեսզի երբեք չսասանվեմ. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԺԶ (16)
Աստվա՛ծ իմ, որ բացում ես ձեռքերդ և լցնում բոլոր արարածներիդ Քո ողորմությամբ, Քեզ եմ հանձնում իմ անձը, Դո՛ւ հոգա և պատրաստիր իմ հոգու և մարմնի կարիքները այսուհետև մինչև հավիտյանս. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս: պատվիրանների. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԺԷ (17)
Մոլորյալներին դարձի՛ բերող, ետ դարձրու ինձ իմ չար սովորություններից բարի սովորության և բևեռի՛ր իմ հոգում մահվան սոսկալի օրը և գեհենի երկյուղը և արքայության սերը, որպեսզի զղջամ մեղքերիս համար և գործեմ արդարություն. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԺԸ (18)
Անմահությա՛ն աղբյուր, բխեցրո՛ւ իմ սրտից ապաշխարության արտասուքներ, ինչպես պոռնիկին, որպեսզի լվանամ իմ հոգու մեղքերն աշխարհից ելնելուց առաջ. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԺԹ (19)
Պարգևի՛չ ողորմության, պարգևի՛ր ինձ ուղղափառ հավատքով և բարի գործով և Քո սուրբ Մարմնի և Արյան հաղորդությամբ գալ Քեզ մոտ. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Ի (20)
Բարերար Տեր, ինձ բարի հրեշտակի հանձնիր՝ իմ հոգին քաղցրությամբ ավանդելու համար և անխռով անցկացնելու դևերի չարիքից, որոնք երկնքի ներքո են. և ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԻԱ (21)
Լույս ճշմարիտ Քրիստոս, արժանավորիր իմ հոգու կոչման օրը ուրախությամբ տեսնել Քո փառքի լույսը և բարիքների հույսով հանգչել արդարների օթևաններում մինչև Քո գալստյան մեծ Օրը. և ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԻԲ (22)
Արդար Դատավոր, երբ գաս Հոր փառքով՝ դատելու կենդանիներին և մեռյալներին, մի՛ մտնիր դատաստանի մեջ Քո ծառայի հետ, այլ փրկիր ինձ հավիտենական հրից և լսելի՛ արա ինձ արդարների երանավետ կանչը դեպի երկնքի արքայությունդ. և ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԻԳ (23)
Ամենողորմ Տեր, ողորմիր Քեզ հավատացողներին՝ յուրայիններին ու օտարներին, ծանոթներին ու անծանոթներին, կենդանիներին ու մեռյալներին. թողությո՛ւն շնորհիր նաև իմ թշնամիներին ու ատողներին ինձ դեմ գործած հանցանքների համար և ետ դարձրու նրանց չարիքից, որ պահում են իմ դեմ, որպեսզի նրանք էլ արժանի լինեն Քո ողորմութեյանը. և ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս: արություն. և ողորմիր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

ԻԴ (24)
Փառավորյա՛լ Տեր, ընդունի՛ր Քո ծառայի աղաչանքները և ի բարի՛ կատարիր իմ խնդրվածքները՝ բարեխոսությամբ սրբուհի Աստվածածնի և Հովհաննես Մկրտչի և սուրբ Ստեփանոս Նախավկայի և մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի և սուրբ առաքյալների, մարգարեների, վարդապետների, մարտիրոսների, հայրապետների, ճգնավորների, կույսերի, միանձանց և Քո բոլոր երկնավոր և երկրավոր սուրբերի. և Քեզ անբաժանելի Սուրբ Երրորդությանդ, փա՛ռք և երկրպագություն հավիտյանս հավիտենից. Ամեն:

ՏԵՐ ՈՂՈՐՄԻՐ

Տեր, ողորմիր, Տեր, ողորմիր,
Տեր, ողորմիր, Տեր, ողորմիր:

Ամենասուրբ Երրորդություն,
տուր աշխարհին խաղաղություն,
հիվանդներին՝ բժշկություն,
ննջեցյալներին՝ արքայություն:

Արի՛, մեր հայրերի Աստված,
Դու, որ նեղյալների ապավենն ես,
հասի՛ր Քո ծառաներին օգնության,
օգնական եղի՛ր հայոց ազգին:

Տեր, ողորմիր, Տեր, ողորմիր,
Հիսուս Փրկիչ, մեզ ողորմիր:

Ընդունի՛ր, Տեր, և ողորմիր:

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳ

ԷՋՄԻԱԾԻՆ, Ներսես Վանական

Ես մեղավոր ու անցավոր,
Հազար անգամ ապաշխարող,
Սակայն երբեք չարդարացող,
Ես մեղավոր մի ուխտավոր:

Էջմիածին, Էջմիածին,
Էջմիածին, Էջմիածին:

Ես մեղավոր մի ուխտավոր:
Ես մի ընծա քո խորանում,
Մի կաթիլ խունկ քո բուրվառում,
Ջերթ քաղցր ձայն թող սպառվեմ,
Գուցե այդպես գութիդ հասնեմ:

Էջմիածին, Էջմիածին,
Էջմիածին, Էջմիածին:
Ես մեղավոր մի ուխտավոր:

✦ ✦ ✦

Թող օրհնյալ լինի մեր ուխտը: